ՄԱՔՍԻՄ ՀՈՒՍԵՅՆԻ ԽԱՄՈՅԱՆ

77 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի քրդագիտական հետազոտությունների խմբի ղեկավար, քրդագետ, լեզվաբան Մաքսիմ Խամոյանը:

Մ. Խամոյանը ծնվել էր 1934 թ. սեպտեմբերի 7-ին ՀԽՍՀ Ապարանի շրջանի Հոբանմազ գյուղում: Շրջանի Ծաղկահովիտ գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական ֆակուլտետը: Ասպիրանտական ուսումնառությունն ստացել է ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում: Այստեղ նա ձեռք է բերել հիմնավոր գիտելիքներ և քրդագիտական փայլուն պատրաստություն:

1964 թ. Մ. Խամոյանը վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության սեկտորում որպես կրտսեր գիտաշխատող ու երկար տարիներ հետազոտական աշխատանք կատարում գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում:

1966 թ. Մ. Խամոյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիան «Քրդերեն լեզվի Բահդինանի բարբառը» թեմայով: Ի սկզբանե նրա գիտական հետաքրքրությունների կիզակետում են գտնվել քրդերենի կառուցվածքի հետազոտության, նրա նյութական բնագավառների առանձնացման և նկարագրման, հնչյունական համակարգի ու քերականական կառուցվածքի վերլուծության, քրդերեն խոսքի կիրառական-ոճական դրսևորումների որոշման և սահմանազատման խնդիրները, քրդերենի բարբառային կառուցվածքի և նրա զարգացման պատմության հարցերը:

Մ. Խամոյանի գիտական հետաքրքրությունների մշտական առարկան են եղել նաև քրդական դարձվածաբանության ուսումնասիրությունն ու քրդական դարձվածաբանության հարցերի մշակումը: Երբ նա ձեռնարկեց զբաղվել դարձվածաբանությամբ, այդ բնագավառում քրդագիտության մեջ գրեթե ոչինչ չէր արվել: Մ. Խամոյանը հրատարակել է «Քուրդ-ռուսերեն դարձվածաբանական բառարանը», որը պարունակում է մոտ 8 հազար դարձվածաբանական հոդված: 1988 թ. Արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ հրատարակվում է նրա «Քրդերեն լեզվի դարձվածաբանության հիմունքներ» ուսումնասիրությունը: Եթե Մ. Խամոյանը ուրիշ ոչ մի բան չաներ, ապա դարձվածաբանության ուղղությամբ նրա

աշխատանքները բավական էին, որ գիտնականի վաստակը թողած լինի իր հետագիծը քրդական բանասիրության մեջ:

Հետազոտական իր հոդվածներով Մ. Խամոյանը կանոնավոր մասնակցել է ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի հրատարակմանը: Այս մատենաշարի XVIII հատորում լույս է տեսել նրա «Գրական քրդերենի ձևավորման հեռանկարները» հոդվածը, որտեղ հեղինակը առաջինն է նկատել՝ որքան Բահդինանի տարածքով բարձրանում ես հյուսիս, Բահդինանի բարբառը այդքան մոտենում է հյուսիսային բարբառին, որքան իջնում ես հարավ՝ Բահդինանի բարբառն այդքան մոտենում է հարավային բարբառին: Հիմք ընդունելով այս հանգամանքը՝ Բահդինանի բարբառին քաջատեղյակ գիտնականն առաջ քաշեց այն թեզը, որ քուրդ ժողովուրդը հնարավորություն ունի խուսափել գրական երկու լեզու ունենալուց և ձեռնամուխ լինելու մեկ, միասնական, ընդհանուր ազգային գրական ձևի լեզվի շինարարությանը:

1990 թ. լույս տեսած «Քրդերեն լեզու, գրականություն» խորագրով գրքում, հատուկ տեղ են գրավում քրդական խոսքի կառուցվածքի հարցերը, նրա տարբեր դրսևորումները՝ կիրառական տառատեսակների կազմը, գրական խոսքի տարբեր բնագավառների, դրանց զարգացման ուղիների և օրինաչափությունների առանձնացումը:

ԱՍԱՆ ԴԵՐԲՈՅԱՆ